«ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 308 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

2022-07-26

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 120 Ա
26.07.2022

«ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 308 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ժզ» կետով, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017թ. փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի» 22-րդ կետով, *հաշվի առնելով,* որ «ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 12.07.2022թ. և 20.07.2022թ. գրություններ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ կապված գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հետ, *հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի հուլիսի 22-ի թիվ 30 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

Ուժը կորցրած ճանաչել «ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» Սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 308 լիցենզիան:

«ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաճախորդների շահերի պաշտպանության և տեղեկացվածության նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայության միջոցով հրապարակել սույն որոշման եզրափակիչ մասը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022 թ. հուլիսի 26, ք. Երևան